Ինչպե՞ս է ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը 2-րդ տարին անընդմեջ ընտրում այն միակ կազմակերպությանը, որն իրականացնում է սփյուռքահայ ուսուցիչների առկա և հեռավար ձևաչափով վերապատրաստումները

2021թ. հուլիսի 22-ից օգոստոսի 31-ը հեռավար տարբերակով անցկացվում են վերապատրաստման դասընթացներ սփյուռքում գործող հայկական ու հայկական բաղադրիչով ուսումնական հաստատություններում աշխատող մանկավարժների համար:

https://escs.am/am/news/9206?fbclid=IwAR2OPiwsKaHE1OjWJNQQSm4iCSZZUzvQyPiNYNAuk3XLcIZsSswyxqaaLew

Այս ծրագրի կազմակերպիչը ԿԳՄՍ նախարարության արտաքին կապերի և սփյուռքի վարչությունն էր, որի ներկայացուցիչ Կարեն Մնացականյանին էլ ուղղեցինք հարցը հետևյալ բովանդակությամբ՝ ի՞նչ ընթացակարգով է ընտրվել այն միակ կազմակերպությունը, որն իրականացնելու է սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման աշխատանքը: Վերոնշյալ հարցին պատասխանեց ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը, համաձայն որի սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման նպատակով ուսուցման ծրագրերի հետ կապված ծառայությունները ձեռք են բերվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի հիման վրա՝ էլեկտրոնային աճուրդով:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА
ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION, SCIENCE, CULTURE AND SPORT
DEPUTY MINISTER

№ _____ _____ թվականի

«ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ» ՀԿ-Ի ՀԱՄԱՀԻՄՆԱԴԻՐ
ՏԻԿԻՆ ԼՈՒՍԻՆԵ ԹՈՓՉՅԱՆԻՆ

Հարգելի՝ տիկին Թոփչյան,

Ի պատասխան Ձեր՝ էլեկտրոնային հարցումների միասնական հարթակում արված հարցմանը հայտնում եմ, որ «1215.11002. Սփյուռքի կրթօջախների ուսուցիչների կարողությունների հզորացում» ՀՀ բյուջետային միջոցառման շրջանակներում սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման նպատակով ուսուցման ծրագրերի հետ կապված ծառայությունները ձեռք են բերվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի հիման վրա՝ էլեկտրոնային աճուրդով: 2021թ մայիսի 21-ին էլեկտրոնային աճուրդով կայացած թիվ ՀՀԿԳՄՍՆԷԱՃԾՁԲ-21/8 ծածկագրով ուսուցման ծրագրերի հետ կապված ծառայությունների գնման գործընթացի արդյունքում հաղթող է ճանաչվել «Ֆիլը» ՍՊԸ-ն, որի հետ 2021թ հունիսի 11-ին կնքվել է թիվ ՀՀԿԳՄՍՆԷԱՃԾՁԲ-21/8-1 գնման պայմանագիրը:

Հարգանքով՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Invalid signature

2021թ. մայիսի 21-ին էլեկտրոնային աճուրդով կայացած թիվ ՀՀԿԳՄՍՆԷԱՃԾՁԲ-21/8 ծածկագրով ուսուցման ծրագրերի հետ կապված ծառայությունների գնման գործընթացի արդյունքում հաղթող է ճանաչվել ՖԻՉԸՐ ՍՊԸ-ն, որի հետ 2021թ. հունիսի 11-ին կնքվել է թիվ ՀՀԿԳՄՍՆԷԱՃԾՁԲ-21/8-1 գնման պայմանագիրը: Այդ մասին տեղեկատվությունը տեղադրված է ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնական կայք էջի՝ Տեղեկատվություն բաժնում գտնվող՝ Հաշվետվություններ և Վերլուծություններ ենթաբաժնում, https://armeps.am/epps/home.do որտեղ մուտք գործելուց հետո սեղմելով Պայմանագրեր կոճակը, բացվում է համապատասխան պատուհանը https://armeps.am/ppcm/public/contracts որտեղ էլ նշում ենք պայմանագրի ծածկագիրը, տվյալ դեպքում՝ ՀՀԿԳՄՍՆԷԱՃԾՁԲ-21/8-1: Այստեղ երևում է, որ ԿԳՄՍ նախարարությունը կնքել է պայմանագիր ՖԻՉԸՐ ՍՊԸ-ի հետ 6.490.000 դրամ արժողությամբ, վերջինիս կողմից հուլիսի 22-ից օգոստոսի 31-ը հեռավար տարբերակով սփյուռքահայ ուսուցիչների համար վերապատրաստման դասընթացներ անցկացնելու համար:



Պատվիրատու	Պայմանագրի ծածկագիրը	Ընտրված մասնակից	ՀՎՀՀ կոդ կամ համարժեք	Պայմանագրի կնքման ամսաթիվ	Գնման ընթացակարգ	Գնման առարկայի անվանում	Պայմանագրի ընդհանուր գումարը	Պայմանագրի գումարը առկա ֆինանսական միջոցներով	Հաշվարկային տնտեսում
ՀՀ կրթության , գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	ՀՀԿԳՄՍՆԷԱՃԾՁԲ-21/8-1	ՖԻՉԸՐ	05025975	11/06/2021	ԷԱՃ	ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ/ ՍՓՅՈՒՌՔԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ/	6490000	6490000	2510000

ԿԳՄՍ նախարարության պաշտոնական կայքում համապատասխան աճուրդով գնման ընթացակարգի արձանագրության վերաբերյալ ոչ մի տեղեկատվություն չկա,
https://escs.am/am/news/9007?fbclid=IwAR0R7VZJEbfKUHdWyzKTJtMdZDTYG4qZx9IdQT1L70qkZFHRplfwHHuh-7o



Էլեկտրոնային աճուրդով գնման ընթացակարգի արձանագրություն-(ծածկագիր ՀՀԿԳՄՍՆԷԱՃԾՁԲ-21/8)

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության՝ ուսուցման ծրագրերի հետ կապված ծառայությունների/սփյուռքի ուսուցիչների վերապատրաստում/ ձեռքբերման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի արձանագրություն, մրցույթի հանձնաժողովի նիստերի արձանագրություններ, մասնակիցների հայտեր

Թեժ գիծ
(374 10) 59-96-00

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

Հետադարձ կապի պատասխանատուներ

մասնավորապես՝

- Մինչև աճուրդը համապատասխան մրցույթի մասին պատշաճ կերպով տեղեկատվություն տարածվե՞լ է տեղեկատվական տարբեր հարթակներում, որի շնորհիվ այլ համապատասխան կազմակերպությունները, ցանկության դեպքում, նույնպես կկարողանային մասնակցել մրցույթին
- Չկա տեղեկատվություն մրցույթի հանձնաժողովի կազմի վերաբերյալ,
- Հանձնաժողովի նիստերի արձանագրությունների բովանդակության վերաբերյալ, որի շնորհիվ պարզ կլիներ, թե ի՞նչ առավելություններ է ունեցել ԿԳՄՍ նախարարության կողմից ընտրված կազմակերությունը մյուս կազմակերպությունների նկատմամբ,
- Չկա տեղեկատվություն, թե քանի՞ սփյուռքահայ ուսուցչի համար է նախատեսված վերապատրաստման ծրագիրը:

Համացանցում ՖԻՉԸՐ ՍՊԸ –ի, մինչև մրցույթի հաղթելը, համապատասխան գործունեության վերաբերյալ ոչ մի տեղեկատվություն չկա: Էլեկտրոնային ռեգիստր կայքում տվյալ անունով գրանցված կազմակերպությունը հիմնադրվել է 2020 թ մարտի 13-ին: https://www.e-register.am/am/companies/1272474



2021թ. հոկտեմբերի 25-ին ուղարկեցինք տվյալ դեպքի վերաբերյալ հարցում, ՀՀ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի info@cpcarmenia.am էլ. հասցեին, սակայն հարցմանը ոչ մի արձագանք չստացանք: Այդ ընթացքում բազմիցս զանգահարեցինք cpcarmenia.am կայքում նշված հեռախոսահամարով +37412777721, սակայն հեռախոսազանգերին այդպես էլ պատասխանող չգտնվեց: Միայն Թրանսփարենսի Ինթերնեշնլ Հակակոռուպցիոն Կենտրոնի և ՀՀ պետական կառավարման ակադեմիայի կողմից կազմակերպված դասընթացների շրջանակում, երբ հնարավոր եղավ անձամբ տեսնելու Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախագահի պարտականությունները կատարող Արամայիս Փաշինյանին և ներկայացնել դեպքը, որոշ ժամանակ անց ստացանք գրավոր պատասխան վերջինիս կողմից: Հանձնաժողովի նախագահի պարտականությունները կատարող Արամայիս Փաշինյանի արձագանքը. <<Հանրային ծառայության մասին>> ՀՀ օրենքի իմաստով, շահերի բախման իրավիճակ ներկայացված չէ, իսկ պետական գնումների ընթացակարգերի պահպանումը դուրս է Հանձնաժողովի լիազորություններից:

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
CORRUPTION PREVENTION COMMISSION

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԵՐԵՎԱՆ, 0009, ԿՈՐՅՈՒՆ 15, ՀԵՌ. (37412) 77 77 28
KORYUN STREET 15, 0009, YEREVAN, REPUBLIC OF ARMENIA, TEL. (37412) 77 77 28

01/452-2022
04.03.2022թ.

«ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ» ՀԿ ՆԱԽԱԳԱՀ
ՏԻԿԻՆ ԼՈՒԻԶԱ ԹՈՓՉՅԱՆԻՆ
Էլեկտրոնային հասցե՝ cep.edu.org@gmail.com

Հարգելի՛ տիկին Թոփչյան,

2022 թվականի փետրվարի 24-ին Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) է մուտքագրվել Ձեր դիմումը՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից սփյուռքում գործող հայկական ու հայկական բաղադրիչով ուսումնական հաստատություններում աշխատող մանկավարժների՝ հեռավար տարբերակով վերապատրաստման դասընթացների կազմակերպման համար անցկացված գնումների ընթացակարգի վերաբերյալ:

Ի պատասխան Ձեր գրության՝ հայտնում ենք հետևյալը.

Հանձնաժողովի լիազորությունները սահմանված են «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով:

Համաձայն նույն հոդվածի 1-ին մասի՝ Հանձնաժողովը քննում և լուծում է պետական պաշտոն զբաղեցնող անձանց, համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց կողմից «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, ինչպես նաև պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնների խախտումների և **իրավիճակային շահերի բախման վերաբերյալ դիմումներ:**

Ըստ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի՝ շահերի բախումն իրավիճակ է, երբ պաշտոն զբաղեցնող անձն իր լիազորություններն իրականացնելիս կատարում է գործողություն կամ ընդունում որոշում, որը ողջամտորեն կարող է մեկնաբանվել որպես իր կամ իր հետ փոխկապակցված անձի անձնական շահերով առաջնորդվել:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը հայտնում է, որ Ձեր կողմից ներկայացված դիմումով, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի իմաստով, շահերի բախման իրավիճակ ներկայացված չէ, իսկ պետական գնումների ընթացակարգերի պահպանումը դուրս է Հանձնաժողովի լիազորություններից:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԱՐԱՄԱՅԻՍ ՓԱՇԻՆՅԱՆ

Կատարող՝
Սերգա Հակոբյան
Հանրային ծառայողների վարքագծի վերահսկողության վարչության գլխավոր մասնագետ
Հեռ.՝ (012)777726

Այս պատասխանը նույնպես հարցեր է առաջացնում, մասնավորապես՝

- Ազդարա՞րը պետք է ներկայացնի շահերի բախման առկայությունը: Չէ որ նշված գործում ակնհայտորեն խախտված են ընթացակարգերի և կայացված որոշումների հիմնավորումները և թափանցիկությունը:
- Մի՞թե կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, ունենալով անհրաժեշտ գործիքակազմ, չի կարող պարզել, թե իրականում, ովքեր են «Ֆիչըր» ՍՊԸ-ի սեփականատերերը, ովքեր են այդ ՍՊԸ-ում իրականացնում կրթական ծրագրերի ապահովումը և բոլորը ի՞նչ կապ ունեն պաշտոնատար անձի կամ անձանց հետ:
- Մի՞թե կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի համար մանրամասն նկարագրված դեպքը հիմք չէ քննություն սկսելու համար համաձայն «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի:

Collaborative Educational Projects <cep.edu.org@gmail.com> Mar 7, 2022, 12:24 PM

to info

Հարգելի պարոն Փաշինյան,

Համապատասխան տեղեկատվություն ստանալու հարցում հասարակական կազմակերպության հնարավորությունները սահմանափակ են, ի տարբերություն կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի: Այս դեպքում ազդարարը պետք է ներկայացնի շահերի բախման առկայությունը: Չէ որ նշված գործում ակնհայտորեն խախտված են ընթացակարգերի և կայացված որոշումների թափանցիկությունը: Մի՞թե կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, ունենալով անհրաժեշտ գործիքակազմ, չի կարող պարզել, թե իրականում, ովքեր են «Ֆիչըր» ՍՊԸ-ի սեփականատերերը, ովքեր են այդ ՍՊԸ-ում իրականացնում կրթական ծրագրերի ապահովումը և բոլորը ի՞նչ կապ ունեն պաշտոնատար անձի կամ անձանց հետ: Մի՞թե կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի համար մանրամասն նկարագրված դեպքը հիմք չէ քննություն սկսելու համար համաձայն «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի:

Հարգանքով՝
Լուիզա Թոփչյան

Համապատասխան պարզաբանումները ուղարկելուց հետո ստացանք Հանձնաժողովի նախագահ Հայկուհի Հարությունյանի պատասխանը. «Ի պատասխան 2022 թվականի մարտի 7-ին ուղարկված Ձեր հարցման՝ հայտնում ենք, որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կողմից, Ձեր դիմումի վերաբերյալ իր լիազորությունների շրջանակում իրականացվել է ուսումնասիրություն, որի արդյունքում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աշխատակազմի (այսուհետ՝ Նախարարություն) և «Ֆիչըր» ՍՊԸ գործադիր տնօրենի միջև կապ չի հայտնաբերվել»:

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
CORRUPTION PREVENTION COMMISSION

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԵՐԵՎԱՆ, 0009, ԿՈՐՅՈՒՆ 15, ՀԵՌ. (37412) 77 77 28
KORYUN STREET 15, 0009, YEREVAN, REPUBLIC OF ARMENIA, TEL. (37412) 77 77 28

31.03.2022թ
01/538-2022

«ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ» ՀԿ ՆԱԽԱԳԱՀ
ՏԻԿԻՆ ԼՈՒԻԶԱ ԹՈՓՉՅԱՆԻՆ
էլ. հասցե՝ cep.edu.org@gmail.com

Հարգելի՛ տիկին Թոփչյան,

Ի պատասխան 2022 թվականի մարտի 7-ին ուղարկած Ձեր հարցման՝ հայտնում ենք, որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կողմից, Ձեր դիմումի վերաբերյալ իր լիազորությունների շրջանակում իրականացվել է ուսումնասիրություն, որի արդյունքում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աշխատակազմի (այսուհետ՝ Նախարարություն) և «Ֆիչըր» ՍՊԸ գործադիր տնօրենի միջև կապ չի հայտնաբերվել:

Համաձայն՝ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի՝ սույն օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում Հանձնաժողով հասցեագրված դիմումը պետք է պարունակի՝

1) դիմողի անունը, ազգանունը, իրավաբանական անձի դեպքում՝ դրա լրիվ անվանումը, հասցեն (իրավաբանական անձի գտնվելու վայրը).

2) «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների առերևույթ խախտում թույլ տված պետական պաշտոն զբաղեցնող անձի կամ համայնքի ղեկավարի կամ նրա տեղակալի կամ Երևան համայնքի վարչական շրջանի ղեկավարի կամ նրա տեղակալի պաշտոն զբաղեցնող անձի կամ վարքագծի կանոնի առերևույթ խախտում թույլ տված կամ իրավիճակային շահերի բախման վիճակում առերևույթ հայտնված պետական պաշտոն զբաղեցնող անձի (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի քննիչի) կամ համայնքի ղեկավարի կամ նրա տեղակալների կամ Երևան համայնքի վարչական շրջանի ղեկավարի կամ նրա տեղակալի՝ պաշտոն զբաղեցնող անձի անունը, ազգանունը, որին վերաբերում է դիմումը, նրա զբաղեցրած պաշտոնը, և նրա պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը, որտեղ անձը պաշտոն է զբաղեցնում.

3) խախտումը կամ իրավիճակային շահերի բախման դեպքը.

4) փաստական հանգամանքներ, որոնցով ողջամտորեն հիմնավորվում է առերևույթ խախտումը կամ դեպքը, առկայության դեպքում՝ այդ հանգամանքների հիմնավորվածությունը հավաստող ապացույցները (փաստաթղթեր, նյութեր).

5) դիմումով ներկայացվող պահանջը (դիմումի առարկան).

6) դիմում տալու տարին, ամիսը, ամսաթիվը.

7) դիմողի ստորագրությունը, իրավաբանական անձի դեպքում՝ դրա իրավասու պաշտոնատար անձի ստորագրությունը: Եթե դիմումը ներկայացվում է ներկայացուցչի միջոցով, ապա դիմումին պետք է կցվի նաև օրենքով սահմանված կարգով տրված լիազորագիրը.

8) դիմումին կցվող փաստաթղթերի ցանկը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ առաջարկում ենք Հանձնաժողով ներկայացնել համապատասխան բովանդակության դիմում, եթե Ձեզ հայտնի է «Ֆիչըր» ՍՊԸ-ի և Նախարարության՝ գնումների գործընթացին առնչություն ունեցող աշխատակիցների միջև առկա կապի վերաբերյալ որևէ տեղեկություն կամ փաստական հանգամանք:

Այս պատասխանը ևս բազմաթիվ տրամաբանական հարցեր է առաջացնում, որոնք կրկին պարզաբանման համար ուղղեցինք Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին՝

Նախարարության ո՞ր աշխատակիցների մասին է խոսքը, որոնց կապը փորձել եք գտնել «Ֆիչըր» ՍՊԸ գործադիր տնօրենի հետ, և ինչու՞ ուսումնասիրություններ չեն իրականացվել վերոնշյալ կազմակերպության հիմնադրի, համահիմնադիրների, այլ աշխատակիցների հետ կապը պարզելու համար: Չէ՞ որ ակնհայտ տեղի է ունեցել ընթացակարգերի կոպտագույն խախտում: Այստեղ հարց է առաջանում, եթե չկան կոռուպցիոն դրսևորումներ, ապա ինչու՞ են խախտվել ընթացակարգերը, կիրառվել ոչ թափանցիկ մոտեցումներ:

Collaborative Educational Projects <cep.edu.org@gmail.com> Mar 31, 2022, 8:38 PM

to info

Հարգելի տիկին Հարությունյան, հարգելի տիկին Հակոբյան,
Ձեր կողմից ուղարկված պատասխան նամակում նշված է, որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից իրականացվել է ուսումնասիրություն, որի արդյունքում ՀՀ ԿԳՄՍ նախարարության աշխատակազմի և «Ֆիչըր» ՍՊԸ գործադիր տնօրենի միջև կապ չի հայտնաբերվել: Կարո՞ղ եք մանրամասնել, նախարարության ո՞ր աշխատակիցների մասին է խոսքը, որոնց կապը փորձել եք գտնել «Ֆիչըր» ՍՊԸ գործադիր տնօրենի հետ, և ինչու՞ ուսումնասիրություններ չեն իրականացվել վերոնշյալ կազմակերպության հիմնադրի, համահիմնադիրների, այլ աշխատակիցների հետ կապը պարզելու համար: Չէ՞ որ ակնհայտ տեղի է ունեցել ընթացակարգերի կոպտագույն խախտում: Այստեղ հարց է առաջանում, եթե չկան կոռուպցիոն դրսևորումներ, ապա ինչու՞ են խախտվել ընթացակարգերը:

Հարգանքով՝
Լուիզա Թոփչյան

Այս վերջին հարցերի պատասխանը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից այդպես էլ չստացանք:

Քանի որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից դեպքի ուսումնասիրման վերաբերյալ ձեռնարկված գործողությունները, այդպես էլ չտվեցին առաջացած հարցերի պատասխանները, ուստի դեպքի մասին բարձրաձայնեցինք ՀՀ արդարադատության և ՀՀ դատախազության հովանու ներքո գործող ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակում https://www.azdararir.am/



Կայքում հստակ նշված է, որ հաղորդման ստուգման հիմքերի առկայության դեպքում ՀՀ գլխավոր դատախազությունը հաղորդումը փաստաթղթային տարբերակով ուղարկում է օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմին: Ընդ որում, հաղորդումը ենթակա է ստուգման «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված



կարգով, եթե հաղորդմամբ ներկայացվող տեղեկությունը բավարար չափով հիմնավորված է, վերաբերում է կոնկրետ պաշտոնատար անձի կամ մարմնի և պարունակում է տվյալներ, որոնք կարող են ստուգվել:

2022 թ. մարտի 10-ին հարուցվում է ազդարարման վարույթ:



Իսկ 2022 թ. մարտի 29-ին ազդարարումը վերահասցեագրվում է օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմին:



2022 թ. ապրիլի 15-ին զանգահարում է Ներսես Հովհաննիսյան անունով ոստիկան և նշում, որ քննում է մեր դիմումը: Վերջինս, մեր հարցումներից հետո միայն ասեց, որ ոստիկանության կենտրոնական բաժնի հետաքննչականից է: Հարցրեց մենք ենք բողոք ներկայացրել «Ֆիչըր» ՍՊԸ-ի դեմ, ինչը պարզապես ապշեցուցիչ էր, քանի որ նախ մենք բողոք չէինք ներկայացրել, այլ ազդարարել էինք տեղի ունեցած ընթացակարգերի խախտումների վերաբերյալ, երկրորդը՝ խոսել էինք այն ընթացակարգերի խախտման մասին, որը թույլ է տրվել պետական մարմնի՝ տվյալ դեպքում ԿԳՄՍ նախարարության կողմից: Պետք է նշել, որ հարցի նման ձևակերպումը մանիպուլատիվ է: Այնուհետև հարցրեց ունենք փաստեր, ինչին մեր պատասխանը հետևյալն էր, տեղի է ունեցել ընթացակարգերի կոպտագույն խախտում, չի ապահովվել թափանցիկություն և հաշվետվողականություն պետական մարմնի կողմից: Առաջարկեց մոտենալ Վաղարշ Վաղարշյան 13՝ նախկին Հատուկ քննչական, հաղորդում տալու հանցագործության մասին, հարցրեցինք, իսկ ինչպես պետք է ձևակերպվի այդ հաղորդումը, ինչին պատասխանեց. <<դե տեսնում եք, եթե փաստեր չունեք նշանակում է ենթադրություններ են>>: Որն էր քննիչի նպատակը աչք փակելու հստակ ներկայացված խախտված ընթացակարգերի վրա: Կրկին նշեցինք տեղի ունեցած խախտումների մասին, որից հետո քննիչը հետաքրքրվեց, թե ինչ ոլորտում է աշխատում մեր կազմակերպությունը: Իմանալուց հետո որ աշխատում ենք կրթության ոլորտում, փորձեց ենթադրել, որ մեր կազմակերպությունն էլ էր ցանկանում դիմել մրցույթին և արդյո՞ք այստեղ չկա շահերի բախում: Բացատրեցինք, որ դա անհնարին է, քանի որ նման վերապատրաստումներ կազմակերպելու համար մենք համապատասխան ռեսուրսներ չունեինք, հետևաբար մրցույթին մասնակցելու ցանկություն չէր կարող ձևավորվել, մեր նպատակը մեկն է, որպեսզի լինի արդար մրցակցային միջավայր: Տպավորություն ստեղծվեց, որ քննիչի նպատակը, ոչ թե խնդրի արդար ուսումնասիրությունն էր, այլ մեր ազդարարման իմաստը անէացնելը: Գործի քննությանը աջակցելու նպատակով առաջարկեցինք ուղարկել բոլոր նամակագրությունները, թե ԿԳՄՍ նախարարության և թե Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի աշխատակիցների հետ, որի համար քննիչից խնդրեցինք էլ. հասցե: Վերջինս կողմից ուղարկված էլ. հասցեին, որն ի դեպ պաշտոնական չէր, ոչ էլ իր անուն ազգանունով, ուղարկեցինք համապատասխան նամակագրությունները: Բոլոր նամակագրությունները ներկայացված են զեկույցի վերնամասում:

2022 թ. մայիսի 5-ին ՀՀ ոստիկանության կենտրոնական բաժնից ստացանք իրենց կողմից իրականացված հետաքննության հիման վրա արված եզրակացությունը: Եզրակացությունում նշվում է, որ ստուգողական նյութերի նախապատրաստման ընթացքում գրություն է ուղարկվել ԿԳՄՍ նախարարություն հիշյալ հարցերի պարզաբանման ուղղությամբ, որոնց պատասխանները եզրակացության մեջ ներկայացված չէին: Սակայն եզրակացության մեջ տեղ են գտել <<ՖԻՉԸՐ>> ՍՊԸ-ի տնօրեն՝ Նարեկ Սարգսյանի դիտարկումները, վերջինիս խոսքով իրենց կազմակերպությունը մրցույթի մասին իմացել է ֆինանսների նախարարության գնումների համակարգից: Այստեղ հարց է առաջանում, ինչ նպատակով այդ տեղեկատվությունը չի տարածել ծառայությունների պատվիրատու ԿԳՄՍ նախարարությունը, որպեսզի այլ կազմակերպություններ, որոնք ունեն համապատասխան ներուժ նույնպես տեղեկանային և մասնակցեին մրցույթին: Ստացվում է քննիչ Ներսես Հովհաննիսյանի համար <<ՖԻՉԸՐ>> ՍՊԸ-ի տնօրեն Նարեկ Սարգսյանի խոսքերը բավարար են եղել եզրակացնելու, որ հիշյալ մրցույթի անցկացման կարգի խախտման կամ կոռուպցիոն սխեմաների կիրառման գործողություններ չեն եղել:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԿԱՐՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱԺԻՆ

ք. Երևան Ս.Վրացյան 90, հեռ. 56-02-02, ֆաքս 52-02-02

«25» 04 2022թ.

N 11/9150

Քաղ. Լուիզա Թոփչյանին

Ծանուցում՝ էլ. հասցե topchyanluiza. @gmail.com

Ձեր կողմից ներկայացված դիմումը քննարկվել է ոստիկանության Կենտրոնական բաժնում և դրա ուսումնասիրությամբ հանցանքի և զանցանքի հատկանիշներ չեն հայտնաբերվել:
Հայտնում ենք,որ ստացված դիմումը թողնվել է անհետևանք և կցվել քարտուղարության կարգագրին:

Պետ,
ոստիկանության գնդապետ Ա.Պապյան

Կատարող՝ Ն.Հովհաննիսյան

Ուստիկանության
պետ, ոստիկանության գնդապետ՝

Ա.Պապյան

«25» 04.2022թ.

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ք.Երևան

« 25 » 04.2022թ.

Ոստիկանության Կենտրոնական բաժնի հետաքննության բաժանմունքի ավագ տեսուչ, ոստիկանության կապիտան՝ Ն.Հովհաննիսյանս, վերանայելով ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչությունից ստացված թիվ Ն/10/48426-22 գրությամբ ստացված ստուգողական նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Սույն թվականի ապրիլի 11-ին ոստիկանության ԵՔԿ-ից Կենտրոնական բաժին է ստացվել՝ Ազգարարման միասնական էլեկտրոնային համակարգի միջոցով ուղարկված Լուիզա Թոփչյանի դիմումը՝ հանցագործության կոռուպցիոն դեպքի նկարագրություն վերտառությամբ:

Լ.Թոփչյանն իր դիմումով նշել է, որ 2021թ. հուլիսի 22-ից օգոստոսի 31-ը, հեռավար տարբերակով անցկացվել են վերապատրաստման դասընթացներ սփյուռքում գործող հայկական ու հայկական բարդարդիչով ուսումնական հաստատություններում աշխատող մանկավարժների համար: Ծրագրի կազմակերպիչը ԿԳՄՍ նախարարության արտաքին կապերի և սփյուռքի վարչությունն է եղել, որի ներկայացուցիչ Կարեն Մնացականյանին էլ ուղղել է իր հարցը հետևյալ բովանդակությամբ, նշելով թե ինչ ընթացակարգով է ընտրվել այն միակ կազմակերպությունը, որը իրականացնելու է սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման աշխատանքը: Վերոնշյալ հարցին պատասխանել է ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը, համաձայն որի սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման նպատակով ուսուցման ծրագրերի հետ կապված ծառայությունները ձեռք են բերվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի հիման վրա՝ էլեկտրոնային աճուրդով: 2021թ մայիսի 21-ին էլեկտրոնային աճուրդով կայացած թիվ ՀՀԿԳՄՍՆԷԱՃԾՁԲ-21/8 ծանկագրով ուսուցման ծրագրերի հետ կապված ծառայությունների գնման գործընթացի արդյունքում հաղթող է ճանաչվել «ՖԻՔԸՐ» ՍՊԸ-ն, որի հետ 2021թ հունիսի11-ին կնքվել է թիվ ՀՀԿԳՄՍՆԷԱՃԾՁԲ-21/8-1 գնման պայմանագիրը: ԿԳՄՍ նախարարության պաշտոնական կայքում համապատասխան աճուրդով գնման ընթացակարգի արձանագրության վերաբերյալ ոչ մի տեղեկատվություն չի եղել, չի նշվել այլ կազմակերպություններ նույնպես մասնակցել են այդ աճուրդին, թե ոչ, մինչև աճուրդը համապատասխան մրցույթի մասին պատշաճ կերպով տեղեկատվություն տարածվել է թե ոչ, չի եղել տեղեկատվություն մրցույթի հանձնաժողովի կազմի վերաբերյալ, նիստերի արձանագրությունների բովանդակության վերաբերյալ, որի շնորհիվ պարզ կլիներ, թե ի՞նչ առավելություններ է ունեցել ԿԳՄՍ նախարարության կողմից ընտրված կազմակերությունը մյուս կազմակերպությունների նկատմամբ, չի եղել տեղեկատվություն, թե քանի սփյուռքահայ ուսուցչի համար է նախատեսված վերապատրաստման ծրագիրը: Վերոնշյալ հարցերն ուղղել է ԿԳՄՍ նախարարությանը, սակայն պարզաբանում այդպես էլ չի ստացել: Համացանցում «ՖԻՔԸՐ» ՍՊԸ -ի համապատասխան գործունեության վերաբերյալ ոչ մի տեղեկատվություն չկա: Էլեկտրոնայինռեգիստր կայքում տվյալ անունով գրանցված կազմակերպությունը հիմնադրվել է 2020 թ մարտի 13-ին:

Ստուգողական նյութերի նախապատրաստման ընթացքում գրություն է հասցեագրվել ՀՀ ԿԳՄՍ նախարարություն հիշյալ հարցերի պարզաբանման ուղղությամբ:

Ստուգողական նյութերի նախապատրաստման ընթացքում «ՖԻՔԸՐ» ՍՊԸ տնօրեն՝ Նարեկ Սարգսյանը հայտնել է, որ հիշյալ մրցույթին մասնակցել է և ճանաչվել հաղթող, մրցույթը բաց է եղել և կարող էին մասնակցել բոլոր ցանկացողները: Մրցույթի մասին իմացել է ֆինանսների նախարարության գնումների համարագից, որը բաց հասանելի տեղեկատվություն է: Ն.Սարգսյանը հայտնել է, որ հիշյալ մրցույթի անցկացման ողջ տեղեկատվությունը, այդ թվում՝ հանձնաժողովի կազմ, արձանագրությունների բովանդակությունը, իրական շահերի մասին տվյալների և հիշատակված բոլոր հարցերի պատասխանները առկա են ֆինանսների նախարարության



…ումների համակարգում, որը կրկին բաց և հասանելի տեղեկություն է: Ն.Սարգսյանը փոխանցել է …կերության գործունեության ծավալման վկայականը:

Պարզվել է նաև, որ հիշյալ հարցի պարզաբանման վերաբերյալ Լ.Թոփչյանը դիմել է նաև Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով, որտեղ վերջինիս ի պատասխան գրությամբ հայտնել են,որ իրականացվել է ուսումնասիրություն, որի արդյունքում ԿԳՄՍ և Ֆիչըր ՍՊԸ-ի գործադիր տնօրենի միջև կապ չի հայտնաբերվել:

Այսպիսով ստուգողական նյութերի նախապատրաստման ձեռք չեն բերվել հիշյալ մրցույթի անցկացման կարգի խախտման կամ կոռուպցիոն սխեմաների վերաբերյալ փաստական տվյալներ, հետևաբար սույն ստուգողական նյութերով բացակայում են հանցանքի և զանցանքի հատկանիշներ: Ելնելով վերոգրյալից.

ԳՏՆՈՒՄ ԵՄ

1. ՀՀ ոստիկանության ԵՔՎ-ից ստացված ստուգողական նյութերը եզրակացությամբ կցել քարտուղարության կարգագրին:
2. Արդյունքների մասին գրավոր հայտնել ԵՔՎ և դիմումատուին:

«Համաձայն եմ»

Ոստիկանության Կենտրոնական բաժնի պետի տեղակալ, ինքը և հետաքննության բաժանմունքի պետ, ոստիկանության մայոր՝ Ա. Թազայան

Ոստիկանության Կենտրոնական բաժնի հետաքննության բաժանմունքի ավագ տեսուչ, ոստիկանության կապիտան՝ Ն.Հովհաննիսյան

Ուստի պատասխան նամակի մեջ նշեցինք այդ մասին:

Lu iza ·
to Yerevan

3:59 PM (2 hours ago)

Հարգելի պարոն Հովհաննիսյան,

Ձեր եզրակացության մեջ ոչ մի համապատասխան փաստաթուղթ, որը կհիմնավորեր Ձեր կողմից հարցված, տվյալ մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպության տնօրեն Նարեկ Սարգսյանի խոսքերը ներկայացված չեն: Չկան նաև ԿԳՄՍ նախարարության կողմից պարզաբանող հարցերի պատասխանները: Չէ որ հենց ԿԳՄՍՆ է պատասխանատու ընթացակարգերի սահմանման և պահպանման, ինչպես նաև ծրագրի արդյունավետության համար: Ինչպես նաև Ֆինանսների նախարարության կողմից ներկայացված համապատասխան փաստաթղթերը, որոնք կհիմնավորեին Ֆիչըր ՍՊԸ-ի տնօրեն Նարեկ Սարգսյանի խոսքերը:

Հարգանքով՝
Լուիզա Թոփչյան

Քննիչի կողմից մեր դիտարկումներին պատասխան չհաջորդեց:

Բացի այդ համապատասխան հարցում https://e-request.am/hy հարթակի միջոցով, մրցույթի բաց և հասանելի լինելու մասին, ուղարկեցինք ՀՀ ֆինանսների նախարարությանը, ում վերահսկողության ներքո է գտնվում պետական

գնումների համակարգը: Հիշյալ մրցույթի վերաբերյալ գնումների համակարգում մենք գտանք միայն կողմերի (ԿԳՄՍՆ և <<Ֆիչըր>> ՍՊԸ) միջև կնքված պայմանագրի մասին հայտարարությունը: Իսկ մրցույթի անցկացման ողջ տեղեկատվությունը՝ հանձնաժողովի կազմի, արձանագրությունների բովանդակության վերաբերյալ, որի հիման վրա պարզ կլիներ, թե որն է <<Ֆիչըր>> ՍՊԸ-ի առավելությունը, այլ կազմակերպությունների նկատմամբ, որն իրապես կապահովեր արդյունավետ վերապատրաստումներ, կայքում չգտնվեց: Ուստի դիմեցինք ֆինանսների նախարարությանը տրամադրել վերոնշյալ տեղեկույթը:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՐԹԱԿ

Հ.556049
10-05-2022թ.
Նախընտրած ծանուցման ձևը՝
Էլ.փոստի միջոցով

Հասցեատեր՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

Դիմող՝ «ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ» ՀԿ
Հասցե՝ ԵՐԵՎԱՆ, 0031, ԱՅԱՓԼՅԱԿ,

ՀԱՐՑՈՒՄ

ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում եմ տրամադրել տեղեկություններ.

Ֆինանսների նախարարության հարգելի աշխատակիցներ,

Դեռևս 2021թ. հունիսի 11-ին ԿԳՄՍ նախարարությունը էլեկտրոնային աճուրդով իրականացրել է ծառայությունների ձեռք բերում: Ծառայությունների գնման գործընթացի արդյունքում հաղթող է ճանաչվել <<Ֆիչըր>> ՍՊԸ-ն, որի հետ 2021թ. հունիսի 11-ին կնքվել է թիվ ՀՀԿԳՄՍՆԷԱՃԾՁԲ-21/8-1 գնման պայմանագիրը: Գնման առարկայի անվանումն է <<Ուսուցման ծրագրերի հետ կապված ծառայությունների/ սփյուռքի ուսուցիչների վերապատրաստում>>:

Կցանկանայի իմանալ, այդ մրցույթը եղել է բաց և հասանելի բոլորին, եթե այո, ապա կխնդրեմ տրամադրել համապատասխան փաստաթուղթը: Ինչպես նաև մրցույթի անցկացման ողջ տեղեկատվությունը, այդ թվում հանձնաժողովի կազմ, արձանագրությունների բովանդակությունը: Քանի որ ՀՀ ոստիկանության կենտրոնական բաժնի հետաքննության բաժանմունքի ավագ տեսուչին՝ Ներսես Հովհաննիսյանին տված պատասխանում <<Ֆիչըր>> ՍՊԸ-ի տնօրեն Նարեկ Սարգսյանը նշել է, որ հիշյալ մրցույթի անցկացման ողջ տեղեկատվությունը առկա է ֆինանսների նախարարության գնումների համակարգում, որը բաց և հասանելի տեղեկություն է: Դիմում եմ Ձեզ, քանի որ վերոնշյալ տեղեկատվությունը չեմ գտել գնումների համակարգում: Միայն կնքված պայմանագրի մասին հայտարարությունն է:

Ֆինանսների նախարարության կողմից մայիսի 17-ին ստացանք էլեկտրոնային գնումների համակարգում և procurement.am հասցեով գործող գնումների պաշտոնական տեղեկագրում առկա տեղեկատվությունը: Պետք է նշել, որ ֆինանսների նախարարությունը մեր կողմից ուղարկված հարցադիմումին արձագանքեց բավական արագ, ի տարբերություն գործի հետ առնչություն ունեցող այլ պետական մարմինների:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Վեբ կայք՝ www.minfin.am, ֆինսախ.հայ
Էլ. փոստ՝ secretariat@minfin.am
Հեռ.՝ (+374 11) 800 156

№ 03/26-1/8881-2022

«ՀԿԾ» ՀԿ-Ի ՆԱԽԱԳԱՀ
ՏԻԿԻՆ ԼՈՒԻԶԱ ԹՈՓՉՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Թոփչյան

Ի պատասխան Ձեր 10.05.2022թ. գրության՝ կից տրամադրում ենք էլեկտրոնային գնումների համակարգում և procurement.am հասցեով գործող գնումների պաշտոնական տեղեկագրում առկա տեղեկատվությունը:

Առդիր՝ 1 ֆայլ

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

5/17/2022

ԱՎԱԳ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by AVANESYAN AVAG 2003610574

ԱՎԱԳ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Տրամադրված փաստաթղթերին ծանոթանալու համար անհրաժեշտ է անցնել հետևյալ հղումներով՝

https://www.cep-org.am/wp-content/uploads/2022/12/Արձանագրություն.pdf
https://www.cep-org.am/wp-content/uploads/2022/12/Մաստեր-Սթայլի-աճուրդի-հայտադիմումն-Է.pdf
https://www.cep-org.am/wp-content/uploads/2022/12/Շահերի-բախում.pdf
https://www.cep-org.am/wp-content/uploads/2022/12/Պայմանագիր.pdf
https://www.cep-org.am/wp-content/uploads/2022/12/Ֆիչրրի-աճուրդի-հայտադիմումն-Է-1-ԿԳՄՍՆ-signed.pdf
https://www.cep-org.am/wp-content/uploads/2022/12/tujanq-21-8.pdf
https://www.cep-org.am/wp-content/uploads/2022/12/hraver.pdf
https://www.cep-org.am/wp-content/uploads/2022/12/lot_1_i_texnikakan_bnutagir.pdf
https://www.cep-org.am/wp-content/uploads/2022/12/Կնքված-պայմանագրի-մասին-հայտարարություն.pdf
https://www.cep-org.am/wp-content/uploads/2022/12/Պայմանագիր-կնքելու-մասին-հայտարարություն.pdf

Տրամադրված փաստաթղթերից պարզ դարձավ, որ աճուրդին, բացի առաջին տեղ զբաղեցրած <<Ֆիչըր>> ՍՊԸ-ից, մասնակցել է ևս մեկ կազմակերպություն՝ <<Մաստեր Սթայլ>> ՍՊԸ անունով: Ներկայացված էր նաև ընտրող հանձնաժողովի կազմը, սակայն հանձնաժողովի արձանագրության բովանդակությունը՝ 1 տողում տեղավորված տեխնիկական բնույթի նախադասություն էր: Պետք է նշել, որ առկա փաստաթղթերում որևէ չափանիշներ իրականացվելիք ծառայությունների որակի վերաբերյալ, որին պետք է համապատասխանեին աճուրդին մասնակցող կազմակերպությունները, սահմանված չէին: Պայմանագրի հավելված N1-ի տեխնիկական բնութագրի համաձայն նշված են ծառայության մատուցման համար նախատեսված չափանիշները, մասնավորապես՝ www.diasporateachers.am կայքէջի շահագործում ծրագրի իրականացման ընթացքում, մասնակիցների գրացման հայտաձևի ստեղծում, էլեկտրոնային գրանցում, տվյալների շտեմարանի ստեղծում և կառավարում, հիմնական և ընթացիկ վիճակագրության ապահովում, , ըստ անհրաժեշտության տեխնիկայի և տարածքի առկայություն, անհրաժեշտ կրթական տեխնոլոգիաների ապահովում, համակարգող անձնակազմի ապահովում, ըստ անհրաժեշտության՝ դասախոսներին տեխնիկական աջակցություն, վերապատրաստման դասընթացների շրջանակներում վիրտուալ շրջայցերի կազմակերպում, էլեկտրոնային վկայականների պատրաստում, էլեկտրոնային առաքում

մասնակիցներին: Բովանդակային տեսանկյունից ծառայությունը նախատեսում է ուսումնական ծրագրերին համապատասխան դասախոսական կազմի ապահովում և վերապատրաստման դասընթացների կազմակերպում և այլն: Վերոնշյալ թվարկվածներից, որո՞նց հնարավորություններն է ունեցել ընտրված կազմակերպությունը, որտե՞ղ է երևում ընտրված կազմակերպության պոտենցիալը նման ծառայություններ մատուցելու համար: Ոչ մի փաստաթղթում չկար տեղեկատվություն աճուրդը հաղթած <<Ֆիչըր>> ՍՊԸ-ի ուսուցիչների վերապատրաստումների վերաբերյալ գործունեության, տեխնիկական բնութագրի սահմանած չափանիշների հիման վրա կազմակերպության կողմից կազմված ուսումնական ծրագրերի բովանդակության, տվյալ կազմակերպության վերապատրաստողների, համապատասխան նյութատեխնիկական հագեցվածության, ընդհանրապես կրթության ոլորտի հետ առնչություն ունենալու փաստերի վերաբերյալ: Ինչ է ատացվում, որ ԿԳՄՍ նախարարությունը սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստումներ իրականացնելու ծառայությունների ձեռքբերման համար չի սահմանում կրթական ոլորտին առնչվող չափանիշներ, որոնք պետք է, հայտադիմումը լրացնելիս, ներկայացնեն կազմակերպությունները: Կրթական ոլորտում ծառայություններ մատուցելու նպատակով էլեկտրոնային աճուրդին մասնակցելու համար դիմում – հայտարարությունում ցանկացողը բավարար է նշի անվանումը, երկրի ռեզիդենտ լինել, չլինելը, հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ), բանկային հաշվեհամարը, գործունեության հասցեն, հեռախոսահամարը, իսկ ոլորտին առնչվող գործունեության վերաբերյալ ոչ մի տեղեկատվություն հարկավոր չէ՞:

Հավելված N 1
«ՀՀԿԳՄՍՆԷԱՃԾՁԲ-21/8»* ծածկագրով
Էլեկտրոնային աճուրդի հրավերի

ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու

<<Ֆիչըր>> ՍՊԸ-ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցել ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ կողմից «ՀՀԿԳՄՍՆԷԱՃԾՁԲ-21/8» ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի (այսուհետ՝ ընթացակարգ) 1 չափաբաժնին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

<<Ֆիչըր>> ՍՊԸ-ն հայտնում և հավաստում է, որ հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ:

<<Ֆիչըր>> ՍՊԸ-ի՝

- հարկ վճարողի հաշվառման համարն է՝ 05025975:
- բանկային հաշվեհամարն է՝ Ամերիաբանկ [redacted]
- գործունեության հասցեն է՝ ք. Աշտարակ Մաշտոցի փ. 61տ:
- հեռախոսահամարն է՝ 098000693:
- ռուսերեն լեզվով անվանումն է՝ ООО «Фичр»

Սույնով <<Ֆիչըր>> ՍՊԸ -ն հայտարարում և հավաստում է, որ՝

1) բավարարում է ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել որակավորման ապահովում

2) ընթացակարգին մասնակցելու շրջանակում՝

- թույլ չի տվել և (կամ) թույլ չի տալու գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն,
- բացակայում է հրավերով սահմանված՝ <<Ֆիչըր>> ՍՊԸ-ին փոխկապակցված անձանց և (կամ) <<Ֆիչըր>> ՍՊԸ-ի կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս <<Ֆիչըր>> ՍՊԸ-ին պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության դեպք:
- ստորև ներկայացնում է հայտը ներկայացնելու օրվա դրությամբ այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավել քան տաս տոկոսը, ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին (իրական շահառուներ) և հավաստում, որ իրական շահառուների մասին ներկայացված տեղեկատվությունը իրական է և չի պարունակում ոչ հավատի տեղեկություններ:

Անունը Ազգանունը Հայրանունը	ՀՀ քաղաքացիների համար՝ նույնականացման քարտի կամ անձնագրի կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը	Օտարերկրյա քաղաքացիների համար համապատասխան երկրի օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը
Նարեկ Սարգսյան Գագիկի	[redacted]	

3) ապահովված է դիմում-հայտարարությունը ներկայացնելուց հետո էլեկտրոնային աճուրդի համակարգի կողմից տրամադրված եզակի ծածկագրի (PIN կոդը) անվտանգությունն ու գաղտնիությունը և դրա օգտագործմամբ էլեկտրոնային աճուրդի համակարգում ընթացակարգին մասնակցելուց բխող ցանկացած գործողություն կատարվում է համապատասխան լիազորություն ունեցող անձի կողմից:

Այնուհետև մյուս մասնակցի կամ մասնակիցների առաջարկած գնից ցածր գին առաջարկելը հիմք կհանդիսանա աճուրդում առաջին տեղ զբաղեցնելու համար, որից հետո էլ մի շարք տեխնիկական փաստաթղթերի պահանջը կատարելուց հետո կստանձնի սփյուռքահայ ուսուցիչների վերպատրաստումների իրականացումը:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՀՀԿԳՄՍՆԷԱՃԾՁԲ-21/8 էլեկտրոնային աճուրդով ուսուցման ծրագրերի հետ կապված ծառայությունների գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 21.05.2021թ. ժամը 11:00-ին Էլեկտրոնային գնումների e-auctions համակարգի միջոցով:

ք. Երևան

21.05.2021թ.
ժ.11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Կարեն Մնացականյան
Հանձնաժողովի անդամ՝ Թամարա Զալինյան
Ամալյա Քոչարյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Անի Թաշչյան

1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.

1.1 Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.1 Ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Էլ. Հասցեները
1	ՖԻՉԸՐ ՍՊԸ	info@feature.am
2	Մաստեր Սթայլ ՍՊԸ	gnumner@masterstyle.am

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

3.1 Մասնակիցը ներկայացրել է հետևյալ գնային առաջարկը.

Հ/Հ	Նախահաշվային գինը, ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումները			
		ՖԻՉԸՐ ՍՊԸ		Մաստեր Սթայլ ՍՊԸ	
		Վերջնական առաջարկված գինը, ՀՀ դրամ			
		Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ-ն	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ-ն
1	9000000	6490000	6490000	8445150	8445150

4. Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության, հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության և հայտերի գնահատման արդյունքների մասին.

4.1 ՖԻՉԸՐ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան, հայտում առկա են պահանջվող փաստաթղթերը, հայտով ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

5. Տվյալներ առաջին տեղ զբաղեցրած և մերժված մասնակիցների վերաբերյալ.

5.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը 1-ին տեղ զբաղեցրած և բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից ընտրված մասնակից ճանաչել ՖԻՉԸՐ ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

5.2 Մաստեր Սթայլ ՍՊԸ-ի հայտը մերժել հիմք ընդունելով 18.05.2017թ թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

6. Գնահատման արդյունքների մասին

6.1 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ ըստ որի <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, որից հետո ընտրված մասնակիցներին ԷԱՃ-ով գնումների կազմակերպման կարգին համապատասխան ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

Կարեն Մնացականյան /նախագահ/

Թամարա Զալինյան

Ամալյա Քոչարյան

Անի Թաշչյան /քարտուղար/

Ուստի եթե վերոնշյալ բյուրոկրատական ընթացակարգը պահպանած կազմակերպությունը իրականում չկարողանա լիարժեք և արդյունավետորեն իրականացնել սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստումները, կխախտվի ծրագրի արդյունավետությունը, կլինի ժամանակի կորուստ, քանի որ ԿԳՄՍՆ նախապես այդ ռիսկերը հաշվի չի առել անհրաժեշտ չափանիշները սահմանելիս

էլեկտրոնային աճուրդի շրջանակում: Այս դեպքում, որո՞նք են եղել ԿԳՄՍՆ-ի դրդապատճառները: Ծրագրի շրջանակում ստեղծված www.diasporateachers.am կայքում վերապատրաստումների ընթացքի, ծրագրի բովանդակության, արդյունքների վերաբերյալ ոչ մի զեկույց, հաշվետվություն, 2022թ. դեկտեմբերի 3-ի դրությամբ չկա:

2022 թ. մայիսի 10-ին ԿԳՄՍ նախարարությունը, թե նախարարության կայքում և թե նախարարության ֆեյսբուքյան էջում հայտարարություն տեղադրեց, համաձայն որի 2022 թ. շարունակում է սփյուռքում գործող հայկական և հայկական բաղադրիչով ուսումնական հաստատություններում (պետական և ոչ պետական վարժարաններ, դպրոցներ, մանկապարտեզներ, լրացուցիչ կրթության հաստատություններ, մեկօրյա կրթօջախներ, մշակութային կենտրոններ և այլն) մանկավարժների վերապատրաստման ծրագիրը:

escs.am/am/news/12474?fbclid=IwAR1Km1W7pgVO5mjBJkEbx72P67HHngWYfAtgdnAcb2cQ8ddyAmv_SyL2GKA

Suggested Sites

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը 2022 թ. շարունակում է սփյուռքում գործող հայկական և հայկական բաղադրիչով ուսումնական հաստատություններում (պետական և ոչ պետական վարժարաններ, դպրոցներ, մանկապարտեզներ, լրացուցիչ կրթության հաստատություններ, մեկօրյա կրթօջախներ, մշակութային կենտրոններ և այլն) մանկավարժների վերապատրաստման ծրագիրը՝ համակցված (հիբրիդային) ձևաչափով:

Առկա ձևաչափով վերապատրաստման փուլը կանցկացվի 2022 թ. հուլիսին. այն նախատեսված է միայն մշակութային խմբակների մանկավարժների և մշակութաբանական առարկաներ դասավանդող ուսուցիչների համար: Հեռավար ձևաչափով վերապատրաստումը կանցկացվի 2022 թ. հուլիս-օգոստոս ամիսներին:

Վերապատրաստումն ընթանալու է ըստ դպրոցների տեսակների և դասավանդվող առարկաների առանձնացված ուսումնական խմբերով՝ յուրաքանչյուրը 120 դասաժամ: Դասընթացներն ավարտած ուսուցիչներին կտրամադրվի ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության վկայագիր:

Ուսումնական խմբերի, ուսումնական պլանների և վերապատրաստող կազմակերպության հայտերը ներկայացնելու մասին տեղեկությունները կտրամադրվեն լրացուցիչ՝ համաձայն սույն ժամանակացույցի.

Լրացուցիչ հարցերի դեպքում պետք է կապ հաստատել ՀՀ ԿԳՄՍՆ սփյուռքի հետ կապերի բաժնի հետ, հեռախոս՝ +374 10 599-647 (աշխ.), +374 91 71-61-62, +374 98 240-140 (what's app, viber), էլ. փոստ՝ karen.mnatsakanyan@escs.am:

ժամանակացույց

https://escs.am/am/news/12474?fbclid=IwAR3Fg8unLxxmAwSVz81YVM21wTpA2qgTTJXQbPmdKly_fJjVT19arR3TuJw

Հայտարարությունում նշված էր, որ առկա ձևաչափով վերապատրաստման փուլը կանցկացվի 2022 թ. հուլիսին, իսկ հեռավար ձևաչափով

վերապատրաստումը կանցկացվի 2022 թ. հուլիս-օգոստոս ամիսներին: Սակայն կրկին ոչ մի տեղեկատվություն չկար վերապատրաստող կազմակերպության կամ կազմակերպությունների մասին, միայն նշված էր, որ վերապատրաստող կազմակերպության հայտերը ներկայացնելու մասին տեղեկությունները կտրամադրվեն լրացուցիչ՝ համաձայն սույն ժամանակացույցի: https://escs.am/files/files/2022-05-10/a776559257a78457ec3fb6076ca2f52e.pdf

N	Տեղեկություն	Ժամկետ	Պատասխանատու	Տեղեկատվական աղբյուր
1.	Առկա վերապատրաստման անցկացման ժամկետի, պայմանների, մասնակցության հայտի ու դիմելու ժամկետի մասին	Մայիսի 23-հունիսի 3-ը	ՀՀ ԿԳՄՍՆ, Վերապատրաստող կազմակերպություն	- www.escs.am - ՀՀ ԿԳՄՍՆ սփյուռքի հետ կապերի բաժին - Վերապատրաստող կազմակերպություն - ՀՀ դեսպանատներ - Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատար
2.	Հեռավար վերապատրաստման անցկացման ժամկետի, պայմանների, մասնակցության հայտի, դիմելու ժամկետի մասին	Հունիսի 27-հուլիսի 4-ը	ՀՀ ԿԳՄՍՆ, Վերապատրաստող կազմակերպություն	- www.escs.am - ՀՀ ԿԳՄՍՆ սփյուռքի հետ կապերի բաժին - Վերապատրաստող կազմակերպություն

2022 թվականի հուլիսի 22-ին, ԿԳՄՍ նախարարությունը, թե նախարարության ֆեյսբուքյան էջում և թե կայքում հրապարակում է տեղեկատվություն, համաձայն որի շարունակվում է սփյուռքում գործող հայկական դպրոցների մանկավարժների վերապատրաստման ծրագիրը:

https://m.facebook.com/story.php?story_fbid=353642116958009&id=100069366692862

https://escs.am/am/news/13325?fbclid=IwAR3XkNiFmGgZa0Z3xNT_-kFDt2ulX9iALYx6LJIfLN70FkDeELmc48miv4U

escs.am/am/news/13325?fbclid=IwAR3XkNiFmGgZa0Z3xNT_-kFDt2ulX9iALYx6LJIfLN70FkDeELmc48miv4U

Work on Big Ben – I... | English Exams - All... | ESL Conversation T... | English Reading | Te... | What It Takes - Arti... | All English Lessons ·... | Flipgrid | Empower... | Wakelet – Save, org...

ժամանակահատվածում:

Հայաստանում վերապատրաստվող ուսուցիչների կեցության, սննդի, դասընթացների ծախսերը հոգում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (ճանապարհածախսը հոգում են ուսուցիչները):

Դասընթացներն ավարտած ուսուցիչները կստանան ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության վկայագիր:

Ուսումնական խմբերի, ուսումնական պլանների և վերապատրաստող կազմակերպության հայտերը ներկայացնելու մասին տեղեկությունները կտրամադրվեն լրացուցիչ՝ համաձայն ժամանակացույցի:

Լրացուցիչ հարցերի դեպքում հարկ է դիմել ՀՀ ԿԳՄՍՆ սփյուռքի հետ կապերի բաժին (հեռախոս՝ +374 10 599-647 (աշխ.), +374 91 71-61-62, +374 98 240-140 (what's app, viber), էլ. փոստ՝ karen.mnatsakanyan@escs.am):

ժամանակացույց

Թեժ գիծ
(374 10) 59-96-00

Տեղեկատու հեռախոս
(374 10) 52-73-43

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

Հետադարձ կապի պատասխանատուներ

Հայտարարության ժամանակացույց ֆայլը բացելով, սեղմում ենք, թե առկա և թե հեռավար վերապատրաստմանը դիմելու ժամկետը և հայտաձևը լրացնելու համար համապատասխան հղումների վրա:

escs.am/files/files/2022-07-22/5cbfdc24e0d5918f30a9bd485941e6b2.pdf

Work on Big Ben – I... | English Exams - All... | ESL Conversation T... | English Reading | Te... | What It Takes - Arti... | All English Lessons ·... | Flipgrid | Empower... | Wakelet – Save, org...

5cbfdc24e0d5918f30a9bd485941e6b2.pdf 1 / 1 100%

	Տեղեկություն	**Տեղեկատվական աղբյուր**
1.	Խմբերի ուսումնական պլանները	https://escs.am/am/news/12474
2.	**Առկա** վերապատրաստման անցկացման ժամկետը	2022 թ. օգոստոսի 1-15-ը
3.	**Առկա** վերապատրաստմանը դիմելու ժամկետը և հայտաձևը	2022 թ. հուլիսի 24-ը https://docs.google.com/forms/d/e/1FAIpQLSenpYNvsUh5KcKLmstlyOui4jGlrE13wuSxnJ6xw15nj8ydsQ/viewform
4.	**Հեռավար** վերապատրաստման անցկացման ժամկետը	2022 թ. օգոստոսի 1-31-ը
5.	**Հեռավար** վերապատրաստմանը դիմելու ժամկետը և	2022 թ. հուլիսի 28-ը https://docs.google.com/forms/d/e/1FAIpQLSenpYNvsUh5KcKLmstlyOui4jGlrE13wuSxnJ6xw15nj8ydsQ/viewform

Բացված ֆայլում տեսնում ենք, որ այս տարի նույնպես վերապատրաստումները իրականացվելու են <<Ֆիչըր>> կազմակերպության կողմից:



ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ - 2022

2022 թվականին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը շարունակում է սփյուռքում գործող հայկական և հայկական բաղադրիչով ուսումնական հաստատություններում (պետական և ոչ պետական վարժարաններ, դպրոցներ, մանկապարտեզներ, լրացուցիչ կրթության հաստատություններ, մեկօրյա կրթօջախներ, մշակութային կենտրոններ և այլն) մանկավարժների վերապատրաստման ծրագիրը՝ 7 ուսումնական ծրագրերով:

Այս տարի վերապատրաստումներն իրականացվում են «Ֆիչըր» կազմակերպության կողմից՝ «ՊրոԴեՖորմ» զարգացման մասնագիտացված հարթակի հետ համագործակցաբար:

Ա. Ուսուցում մանկապարտեզում (առցանց, 120 դ/ժամ),
Բ. Ուսուցում մեկօրյա դպրոցում (առցանց, 120 դ/ժամ),
Գ. Հայերենի տարրական ուսուցում ամենօրյա դպրոցում (առցանց, 120 դ/ժամ),
Դ. Հայոց լեզվի և գրականության դասավանդում (առցանց, 120 դ/ժամ),
Զ. Հայոց պատմություն (առցանց, 120 դ/ժամ),
Ե. Հայ մշակույթի պատմություն և արվեստ (**առկա՝ 60 դ/ժամ, առցանց՝ 60 դ/ժամ**), դասընթացներին և թեմատիկ բացվածքներին կարող եք ծանոթանալ այստեղ՝ https://cutt.ly/HLK13J5,
Է. Տնօրենների վերապատրաստում (120 դ/ժամ):

«Ե. Հայ մշակույթի պատմություն և արվեստ» խմբի մասնակիցների համար Հայաստանում առկա դասընթացները կանցկացվեն

2022թ. օգոստոսի 1-15-ը:
Կազմակերպիչները հոգում են ՀՀ-ում կեցության, սննդի, դասընթացների և

Ինչպես գիտենք անցած տարի ԿԳՄՍ նախարարությունը սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստումները իրականացնելու ծառայությունները ձեռք էր բերել էլեկտրոնային աճուրդի միջոցով: Այդ աճուրդի անցկացման մասին համապատասխան հայտարարություն իր տիրապետման տակ գտնվող սոցիալական, վեբ կայքերի միջոցով նախապես չէր տարածել, որպեսզի տեղեկատվությունը ավելի հասանելի լիներ այլ համապատասխան կազմակերպություններին, որոնք ունենալով անհրաժեշտ պոտենցիալը, կկարողանային մասնակցել աճուրդին: Նույն մոտեցմամբ ԿԳՄՍ նախարարությունը աշխատել է նաև այս տարի:

«Համագործակցային կրթական ծրագրեր» հկ

Դեկտեմբերի 3, 2022թ.